Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

Ամսաթիվ՝

Երրորդ կողմի անունը՝

Հասցեն՝

Թեմա՝ ContourGlobal-ի Երրորդ կողմի համապատասխանության հաստատում

Հարգելի պարոն կամ տիկին,

ContourGlobal plc ընկերությունն էլեկտրաէներգիա է արտադրում ամբողջ աշխարհում և, յուրաքանչյուր վայրում գործունեություն ծավալելիս, ձգտում է դա անել ամենաբարձր բարոյական չափորոշիչներին համապատասխան: Մենք պահպանում ենք Միավորված ազգերի կազմակերպության համաշխարհային պայմանագրի սկզբունքները և պահանջում, որ մեր երրորդ կողմերը ընդունեն այդ սկզբունքներին հետևելու մեր հանձնառությունը: Մաս կազմելով համաշխարհային համայնքի, որը ներառում է միջազգային կազմակերպություններ և քաղաքացիական հասարակության խմբեր՝ ContourGlobal plc ընկերությունը և իր դուստր ձեռնարկությունները (այսուհետև՝ «ContourGlobal») ավելի ու ավելի են ուշադրություն սևեռում կոռուպցիայի, մարդկանց թրաֆիքինգի և շահերի բախման խնդիրների վրա՝ որպես ամբողջ աշխարհում զարգացման և բիզնես էթիկայիզգլխավոր խոչընդոտների: Որպես էներգառեսուրսների զարգացման միջազգային ընկերություն՝ ContourGlobal-ը ենթարկվում է այն երկրների հակակոռուպցիոն օրենքներին, որոնցում գործում է, այդ թվում՝ Միացյալ Թագավորության «Կաշառակերության դեմ պայքարի մասին» օրենքին (Օրենք «Կաշառակերության դեմ պայքարի մասին»), ԱՄՆ «Արտերկրում կոռուպցիայի մասին» օրենքին («ԱԿՄՕ») և տարբեր միջազգային պայմանագրերում սահմանված հակակոռուպցիոն ստանդարտներին (հավաքականորեն՝ «Կաշառակերության դեմ պայքարի մասին օրենքներ»): ContourGlobal-ի էթիկայի և համապատասխանության ծրագիրը նախատեսված է երաշխավորելու համար, որ մենք բիզնեսը վարում ենք գործարար էթիկայի պահանջներին համապատասխան և բիզնես գործելակերպերում ազնվության օրինակ ենք ծառայում ամբողջ աշխարհում:

Համաձայն ContourGlobal-ի քաղաքականությունների՝ մենք ծառայություն մատուցողներից, ներկայացուցիչներից, խորհրդատուներից և այլ երրորդ կողմերից (այսուհետև՝ միասին անվանվելով «Երրորդ կողմեր» և յուրաքանչյուրը առանձին՝

«Երրորդ կողմ») պահանջում ենք հետևել մեր Մատակարարի վարվեցողության կանոնագրքի դրույթներին, ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի կատարմանն ուղղված Մատակարարի ուղեցույցին, Կաշառակերության դեմ պայքարի մասին օրենքներին և ContourGlobal-ի քաղաքականություններին ու ընթացակարգերին, ներառյալ մեր Հակակոռուպցիոն քաղաքականությանը: Երրորդ կողմերից նաև պահանջվում է մասնակցել ContourGlobal-ի համապատասխանության ապահովման համար ընթացակարգերին: Այդ ընթացակարգերը հնարավորություն են ընձեռում ContourGlobal-ին գնահատելու հավանական Երրորդ կողմերի անհամապատասխանության ռիսկը՝ նախքան նրանց հետ համագործակցելը՝ նպատակ ունենալով ContourGlobal-ին պաշտպանելու օրենքի խախտումներից և համոզվելու, որ մեր Երրորդ կողմերը համապատասխանում են ContourGlobal-ի վարքագծի կանոններին:

Մենք ձգտում ենք «իրական գործընկերություն» ձևավորել մեր Երրորդ կողմերի հետ՝ փոխադարձ խթաններ ստեղծելով կայունության համար և խրախուսելով թափանցիկությունը: Այդ նպատակով՝ մենք պահանջում ենք, որԴուք համաձայնվեք մեզ թույլ տաք վերապատրաստել Ձեր աշխատողներին ու կապալառուներին, որոնք կարող են ծառայություններ մատուցել ContourGlobal-ին, որպեսզի նրանք տեղյակ լինեն ContourGlobal-ի արժեքներից և ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի, մասնավորապես՝ մարդու իրավունքների վերաբերյալ դրույթների և աշխատանքային սկզբունքների կատարման սկզբունքներին:

Բացի այդ, Դուք համաձայնում եք Ձեր աշխատողներին ու կապալառուներին թույլ տալ ContourGlobal-ի կամ Ձեր գործողությունների մասին մտահոգություններ հայտնել ContourGlobal-ի մտահոգությունների արտահայտման համակարգի՝ EthicsLine-ի միջոցով: EthicsLine մուտք գործել կարելի է հետևյալ հղմամբ՝ https://secure.ethicspoint.com/domain/media/en/gui/37533/index.html:

Ավելին՝ որպես ContourGlobal-ի հետ համագործակցել ցանկացող Երրորդ կողմ, Դուք ստորև ընդունում, համաձայնում և հավաստում եք, որ՝

a) ո՛չ Դուք, ո՛չ Ձեր դուստր ձեռնարկություններից որևէ մեկը չեք կատարել վճարումներ, որոնք կհամարվեն Կաշառակերության դեմ պայքարի մասին օրենքների խախտումներ, և

b) ո՛չ Դուք, ո՛չ Ձեր դուստր ձեռնարկություններից որևէ մեկը չեն իրականացնում գործունեություն, որը հակասում է ContourGlobal-ի՝ ՄԱԿ-ի Գլոբալ

Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորություններին և ՄԹ «Ժամանակակից ստրկության մասին» օրենքին:

Խնդրում ենք ստորագրել և վերադարձնել այս գրության մեկ օրինակ՝ որով կհավաստեք, որ ստացել եք տվյալ գրությունը. հասկացել եք այն և տալիս եք Ձեր համաձայնությունը, իսկ մեկ օրինակ պահել սեփական փաստաթղթերի պահոցում: Խնդրում ենք նաև լրացնել և վերադարձնել ContourGlobal-ի կից ներկայացված «Երրորդ կողմի հարցաթերթիկը», ինչպես նաև տրամադրել համապատասխան քաղաքականությունների մի օրինակ, որոնք առնչվում են ստորև տրված հարցերին:

Շնորհակալություն սույն խնդրի նկատմամբ Ձեր ուշադրության համար:

Անկեղծ հարգանքով՝

ContourGlobal-ի Համապատասխանության բաժին
compliance@contourglobal.com

Առդիր՝
Սույն գրության պատճեն
ContourGlobal-ի Երրորդ կողմի հարցաթերթիկ

Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

**Հաստատում**

Ես կարդացել և հասկացել եմ վերը շարադրված սկզբունքները, քաղաքականություններն ու չափորոշիչները և սույնով համաձայն եմ հետևել դրանց։

____________________________________________

Անունը՝

Ում անունից և հանձնարարությամբ՝

Ամսաթիվ՝

Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

# CONTOURGLOBAL-Ի ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Խնդրում ենք պատասխանել բոլոր կիրառելի հարցերին: Եթե որևէ հարց կիրառելի չէ, խնդրում ենք նշել «Կ/Չ»: Եթե չեք կարող պատասխանել որևէ հարցի, խնդրում ենք բացատրել, թե ինչու:

## Բաժին I

## Ձեր տվյալները

1. Ամբողջական անունը՝ ըստ անձը հաստատող փաստաթղթի՝

   (այսուհետև՝ «Դուք», «Ձեր» կամ «Ձեր ընկերությունը»)

2. Առևտրային անվանումը (եթե վերը նշվածից տարբեր է)՝

3. Հասցեն՝

4. Իրավաբանական անձի գրանցման երկիրը՝

5. Գրանցման թվականը՝

6. Ընկերության պետական գրանցման համարը (Առևտրաարդյունաբերական պալատի կողմից տրված գրանցման համարը կամ նմանատիպ այլ համար)՝

7. Իրավական կարգավիճակը (խնդրում ենք նշել բոլոր համապատասխան տարբերակները)՝

☐ Ֆիզիկական անձ / անհատ ձեռներեց

Եթե ֆիզիկական անձ կամ անհատ ձեռներեց եք, նշեք անձի ծննդյան թվականը և քաղաքացիությունը՝

☐ Գործընկերություն

☐ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն / գործընկերություն

☐ Փակ բաժնետիրական ընկերություն

☐ Այլ (խնդրում ենք նշել)՝

8. Մայր ընկերության անվանումը (եթե կիրառելի է)՝

9. Դուստր ձեռնարկությունների անվանումները (եթե կիրառելի է)՝

10. Փոխկապակցված իրավաբանական անձինք / համատեղ ձեռնարկություններ (եթե կիրառելի է)՝

11. Ֆոնդային բորսա, որտեղ Ձեր արժեթղթերը ցուցակագրված են (եթե կիրառելի է)՝

12. Խնդրում ենք նշել Ձեր հիմնական ձեռնարկատիրական գործունեության տեսակը և գործունեության ծավալման հիմնական երկրները՝

13. Ձեր ընկերության կայքի URL հասցեն՝

14. Համապատասխանության հարցերի համար պատասխանատու պաշտոնյայի (եթե կիրառելի է) կամ համապատասխանության հարցերով կոնտակտային անձի անունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն՝

15. Ձեր ընկերության՝ ContourGlobal-ի հետ հարաբերությունների համար պատասխանատու գլխավոր կոնտակտային անձի տվյալները, ներառյալ պաշտոնը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը՝

Բաժին II

## <u>Պայմանագրի մանրամասները</u>

16. Խնդրում ենք ներկայացնել աշխատանքների ամբողջական ծավալների և բովանդակության մանրամասն նկարագրությունը, որոնք տրամադրելու եք ContourGlobal-ին, և գործարար հարաբերության բնույթը (*օրինակ*՝ մեկանգամյա ծառայություններ, շրջանակային պայմանագիր, ապրանքների մատակարարում, խորհրդատու, գործակալ և այլն).

17. Ո՞ր երկրներում եք ծառայություններ կամ մատակարարումներ տրամադրելու ContourGlobal-ին:

18. Ո՞ր երկրներից եք ձեռք բերելու ապրանքներ կամ աշխատուժ՝ ContourGlobal-ին ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու համար:

19. Որևէ երրորդ կողմ, միջնորդ կազմակերպություն կամ ենթակապալառու օգտագործելու՞ եք առաջարկվող պայմանագրի ներքո աշխատանքներ կամ ծառայություններ կատարելու նպատակով:

ԱՅՈ ☐

ՈՉ ☐

20. Եթե այո, նշեք նրանց անունը և հասցեն, կապը Ձեզ հետ և գործունեությունները, որոնք նրանք իրականացնելու են.

| Ենթակապալառուի / միջնորդի / անհատի լրիվ անունը | Հասցեն | Գործարար հարաբերությունը Ձեզ հետ | Գործունեության տեսակը, որոնք նրանք իրականացնելու են, և իրականացման վայրը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

Բաժին III

**Կառավարում**

21. Խնդրում ենք նշել Ձեր ընկերության Տնօրենների խորհրդի բոլոր անդամներին՝

| Լրիվ անունը (անհատներ) | Պաշտոնը | Քաղաքացիությունը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

Բաժին IV

**Սեփականություն**

22. Խնդրում ենք նշել ցանկացած ուղղակի կամ անուղղակի բաժնետիրոջ անունը, որը Ձեր ընկերության սեփականատեր է՝

| Ընկերության անվանումը / լրիվ անունը (անհատներ) | Սեփականության տոկոսը | Հասցեն / Քաղաքացիությունը (անհատներ) | Ընկերության պետական գրանցման համարը / Ծննդյան թվականը (անհատներ) |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

Բաժին V

**<u>Բանկային տվյալներ վերջնական շահառուի հաշվի և հարկային տվյալների համար</u>**

23. Խնդրում ենք տրամադրել բանկային տվյալները՝

| | |
|---|---|
| Հաշվետերը | |
| Բանկի անվանումը | |
| Արժույթը | |
| Բանկի կոնտակտային անձի անունը | |
| IBAN համարը (միայն ԵՄ բանկային հաշիվների դեպքում) | |
| Բանկային հաշվի համարը | |
| SWIFT կոդը | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | |
| ԱԱՀ համարը | |

ContourGlobal

Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

Բաժին VI

<u>Համագործակցություն և շփումներ պետական պաշտոնատար անձանց հետ, կապեր կառավարության հետ և համապատասխանություն հակակոռուպցիոն քաղաքականության պահանջներին</u>

«**Պետական պաշտոնատար անձ**» նշանակում է՝

Կառավարության կամ դրա ցանկացած բաժնի, գործակալության կամ պետական հաստատության (որը ներառում է տարածքային կառավարման մարմին կամ պետական ձեռնարկություն) կամ հասարակական միջազգային կազմակերպության (օրինակ՝ Համաշխարհային բանկի, Եվրոպական համայնքի կամ Աֆրիկյան զարգացման բանկի) կամ ցանկացած քաղաքական կուսակցության ցանկացած պաշտոնյա կամ աշխատող կամ կուսակցական գործիչ կամ քաղաքական պաշտոնի թեկնածու:

«**Ազգականը**» ներառում է՝

ամուսին, երեխա՝ կենսաբանական կամ ամուսնության կամ որդեգրման արդյունքում ձեռք բերված, ծնող, տատիկ կամ պապիկ կամ հովանավորյալ խնամք իրականացնող ծնող, խորթ ծնող կամ ամուսնու կամ կնոջ ծնող, քույր կամ եղբայր՝ կենսաբանական կամ ամուսնության կամ որդեգրման արդյունքում ձեռք բերված, մորաքույր կամ հորաքույր, քեռի կամ հորեղբայր, եղբորորդի, եղբոր կամ քրոջ աղջիկ, զարմիկ կամ զարմուհի, գրանցված քաղաքացիական զուգընկեր, մտերիմ անձ կամ ցանկացած այլ հարաբերություն, որում անհատները կապված են արյունակցական կամ ամուսնական կապով:

24. Համագործակցություն և շփումներ պետական պաշտոնատար անձանց հետ. ContourGlobal-ի համար աշխատանք կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս ակնկալու՞մ եք շփումներ ունենալ պետական պաշտոնատար անձանց հետ (*օրինակ*՝ գործ ունենալ մաքսատան ծառայողների կամ այլ պետական պաշտոնատար անձանց հետ՝ ասենք, լիցենզիաների կամ թույլատրագրերի ստացման կամ նորացման հարցերով): Եթե այո, խնդրում ենք նշել շփումների բնույթը՝

25. Համագործակցություն և շփումներ պետական պաշտոնատար անձանց հետ – երրորդ կողմեր, միջնորդներ կամ ենթակապալառուներ.

ContourGlobal-ի համար աշխատանք կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս ակնկալու՞մ եք, որ Ձեր երրորդ կողմերը, միջնորդները, ենթակապալառուները շփումներ կունենան պետական պաշտոնատար անձանց հետ (*օրինակ*՝ գործ ունենալ մաքսատան ծառայողների կամ այլ պետական պաշտոնատար անձանց հետ՝ ասենք, լիցենզիաների կամ թույլատրագրերի ստացման կամ նորացման հարցերով)։ Եթե այո, խնդրում ենք նշել շփումների բնույթը՝

26. Կապեր կառավարության հետ.

a. Այժմյան կամ նախկին որևէ Պետական պաշտոնատար անձ կամ այդպիսի անձի Ազգական ուղղակի կամ անուղղակի սեփականատիրական շահ ունի՞ Ձեր ընկերությունում։ (Ծանոթություն. անուղղակի սեփականությունը կարող է ներառել սեփականություն Պետական պաշտոնատար անձի Ազգականի կողմից կամ վստահված

անձի միջոցով):

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

b. Այժմյան կամ նախկին որևէ Պետական պաշտոնատար անձ կամ այդպիսի անձի Ազգական հանդիսանու՞մ է Ձեր ընկերության աշխատող, ծառայող կամ տնօրեն:

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

27. Եթե վերոնշյալ 26 (a) կամ (b) հարցի պատասխանը «այո» է, խնդրում ենք՝

a) նշել Պետական պաշտոնատար անձ հանդիսացողի անունը և պաշտոնեական դիրքը՝

b) նկարագրել նրա ծառայողական պարտականություններն ու պարտավորությունները կառավարությունում, պետական հաստատությունում կամ քաղաքական կուսակցությունում և, եթե Պետական պաշտոնատար անձը Ձեր ընկերության սեփականատիրոջ, տնօրենի, ծառայողի կամ աշխատողի Ազգական է, նշել այդ Պետական պաշտոնատար անձի կապը Ձեր անձնակազմի հետ՝

c) նշել Ձեր ընկերությունում նրա սեփականատիրական շահի տեսակը և աստիճանը (օրինակ՝ սեփականության տոկոսը, Ձեր ընկերությունում զբաղեցրած պաշտոնները, բաժնետեր, ծառայող, տնօրեն լինելը և այլն)՝

28. Դուք կամ Ձեր տնօրեններից, ծառայողներից, աշխատողներից կամ սեփականատերերից որևէ մեկը երբևէ մեղադրվել կամ դատապարտվե՞լ եք կամ հետաքննվե՞լ եք կամ ներգրավվե՞լ եք դատական կարգով վեճի լուծման մեջ կամ կատարե՞լ եք սեփական հանցանքի ճանաչման գործարք այնպիսի գործողությունների համար, որոնք ներառում են կաշառակերություն, կոռուպցիա կամ որևէ տեսակի այլ ոչ էթիկական արարք։

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

Եթե այո, խնդրում ենք նկարագրել.

## Բաժին VII

## Համապատասխանության ծրագիր

29. Դուք ունե՞ք հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր:

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

30. Եթե վերոնշյալ հարցի պատասխանը «այո» է՝

a) նկարագրեք Ձեր համապատասխանության ծրագիրը, որը պետք է ապահովի համապատասխանությունը օրենքների պահանջներին, այդ թվում՝ կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարի մասին օրենքների, ներառյալ ծրագրի կառուցվածքը, այդպիսի աշխատանքի համար նշանակված կամ պատասխանատու աշխատողների թիվը, նրանց դիրքը կամ պաշտոնը, կամ թե ում են նրանք հաշվետու, և ով է լիակատար վերահսկողություն իրականացնում համապատասխանության ծրագրի վրա.

b) կցեք նորմատիվ իրավական համապատասխանության ապահովման քաղաքականությունների, ընթացակարգերի կամ ուղեցույցների, այդ թվում՝ վարվեցողության, էթիկայի կամ տնտեսվարման մեթոդների վերաբերյալ գրավոր կանոնագրքերի կամ նմանատիպ կորպորատիվ քաղաքականության կամ ղեկավար ցուցումների պատճենները, որոնք վերաբերում են ստորև նշվածներից որևէ մեկին՝ էթիկայի կանոնների պահպանում, համապատասխանություն օրենքներին, շահերի բախում, տնտեսական պատժամիջոցներ, հակազդեցություն փողերի լվացման և ահաբեկչության դեմ, նվերներ և հյուրասիրություն կամ կաշառակերության կամ կոռուպցիայի դեմ պայքարի կամ նմանատիպ օրենքների պահանջների կատարում.

c) բացատրեք, թե որքանով է Ձեր Համապատասխանության ծրագիրը ներառում հետևյալը՝

1. Երրորդ կողմի համապատասխանության ապահովման համար պատշաճ ջանադրության և մոնիթորինգի ընթացակարգեր
2. կոռուպցիայի և կաշառակերություն դեմ պայքարի ստանդարտ պայմանագրի դրույթներ
3. ընթացակարգեր հետևյալի հաստատման համար՝
    i. նվերներ, ճանապարհորդություն, բնակեցում, կացարան, սնունդ կամ զվարճալիքներ

ii. բարեգործական կամ քաղաքական նպատակներով ներդրումներ, հովանավորչություն, նվիրատվություններ կամ այլ համայնքային նախագծեր

4. վերապատրաստման դասընթացներ, հաղորդակցություններ և (կամ) առնչվող նյութեր։

Բաժին VIII

## ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիր / «Ժամանակակից ստրկության մասին» օրենք

31. Դուք իրականացնու՞մ եք մարդու իրավունքների պաշտպանության կամ ստրկության դեմ պայքարի քաղաքականություն:

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

32. Բոլոր աշխատողներին վճարվու՞մ է օրենքով սահմանված առնվազն նվազագույն աշխատավարձը (կամ արդյունաբերական կողմնորոշիչ ստանդարտներով սահմանված, եթե նվազագույն աշխատավարձ գոյություն չունի):

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

33. Դուք աշխատանքի վերցնու՞մ եք 18-ից ցածր տարիքի երեխաներին:

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

34. Եթե ունեք 18-ից ցածր տարիքի աշխատողներ, կարո՞ղ եք հաստատել, որ նրանք չեն կատարում վտանգավոր աշխատանքներ կամ չեն աշխատում

գիշերային ժամերին (22:00-ի և 06:00-ի միջև):

ԱՅՈ ☐ ՈՉ ☐ Կ/Չ ☐

35. Դուք որևէ տեսակի հարկադիր կամ պարտադիր աշխատանք օգտագործու՞մ եք:

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

36. Դուք կատարու՞մ եք ձեր երկրում գործող աշխատանքի հիգիենայի և անվտանգության տեխնիկայի մասին օրենքների պահանջները:

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

Բաժին IX

<u>Շահերի բախման վերաբերյալ հարցաթերթիկ և բացահայտում</u>

Որպես ContourGlobal ընկերությունում աշխատելու պայման՝ մենք բոլոր Երրորդ կողմերից պահանջում ենք հայտնել շահերի փաստացի կամ հնարավոր բախումների, ինչպես նաև ցանկացած հարաբերությունների, պայմանավորվածությունների և (կամ) հանգամանքների մասին, որոնք կարող են ստեղծել շահերի բախում:

**<u>Սահմանումներ.</u>**

**«Շահերի բախում»** – Շահերի բախումը ցանկացած իրավիճակ է, որում անձը կամ սուբյեկտը ունի մասնավոր կամ անձնական շահ, որը կարող է իր պարտականությունների կամ որոշումների անաչառ կատարման վրա ազդելու տպավորություն ստեղծել: Կարևոր է նկատի ունենալ, որ անպայման չէ, որ շահերի բախումը ներառի դրամական կամ ֆինանսական շահեր. այն առկա է, երբ գոյություն ունի որևէ հարաբերություն կամ այլ անձնական շահ, որը ողջամտորեն կարող է կանխակալություն ստեղծել կամ վարկաբեկել անձի ունակությունը՝ գործելու ContourGlobal-ի լավագույն շահերին համապատասխան:

**«Ազգական»** - ներառում է՝ ամուսին, երեխա՝ կենսաբանական կամ ամուսնության կամ որդեգրման արդյունքում ձեռք բերված, ծնող, տատիկ կամ պապիկ կամ հովանավորյալ խնամք իրականացնող ծնող, խորթ ծնող կամ ամուսնու կամ կնոջ ծնող, քույր կամ եղբայր՝ կենսաբանական կամ ամուսնության կամ որդեգրման արդյունքում ձեռք բերված, մորաքույր կամ հորաքույր, քեռի կամ հորեղբայր, եղբորորդի, եղբոր կամ քրոջ աղջիկ, զարմիկ կամ զարմուհի, գրանցված քաղաքացիական զուգընկեր, մտերիմ անձ կամ ցանկացած այլ հարաբերություն, որում անհատները կապված են արյունակցական կամ ամուսնական կապով:

Շահերի բախման օրինակները ներառում են հետևյալը, բայց չեն սահմանափակվում դրանցով՝

- ContourGlobal-ի աշխատող կամ նրա Ազգական, որը սեփականություն, վերահսկողություն կամ այլ շահ ունի Ձեր ընկերությունում.

- Ձեր ընկերությունը, որը հովանավորում է, նվիրատվություն է անում կամ փող կամ որևէ արժեքավոր բան է վճարում ContourGlobal-ի աշխատողին կամ նրա ազգականներից որևէ մեկին:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ մեզ հետաքրքրում է ոչ միայն շահերի փաստացի բախումների, այլ նաև ցանկացած հանգամանքի բացահայտումը, որը, Ձեր կարծիքով, կարող է ստեղծել շահերի բախման տպավորություն:

Անպայման չէ, որ որևէ փաստացի կամ հնարավոր շահերի բախման բացահայտումը Ձեզ որակազրկի ContourGlobal-ում աշխատելուց, այլ ընդհակառակը՝ մեզ կտա իրավիճակն ուսումնասիրելու և գործողությունների համապատասխան ընթացակարգ որոշելու հնարավորություն: Այդպիսի գործողությունը կարող է ներառել լրացուցիչ բացահայտումներ կամ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ նվազագույնի հասցվի կամ բացառվի ցանկացած (հնարավոր կամ փաստացի) շահերի բախում:

Շահերի բախման բացահայտմանը վերաբերող Ձեր պարտականությունը շարունակական է, ուստի, աշխատանքի ընդունվելու դեպքում, պետք է անհապաղ գրավոր տեղեկացնեք ContourGlobal-ի Համապատասխանության բաժնին (compliance@contourglobal.com), եթե այս ձևը ներկայացնելուց հետո իմանաք որևէ փաստացի կամ հնարավոր շահերի բախման մասին:

Խնդրում ենք լրացնել ստորև տրված ձևը՝ հաստատելու համար, որ շահերի բախում չունեք, կամ՝ հնարավոր շահերի բախումների մասին հայտարարելու համար:

**Բացահայտման ձև.**

**Բաժին Ա – Ֆինանսական կամ սեփականատիրական շահեր**

| | Այո | Ոչ |
|---|---|---|
| 1. ContourGlobal-ի աշխատողներից կամ տնօրեններից կամ նրանց ազգականներից որևէ մեկը ֆինանսական կամ սեփականատիրական շահ ունի՞ Ձեր ընկերությունում կամ փոխկապակցված իրավաբանական անձանց մեջ: | ☐ | ☐ |

Եթե այո, խնդրում ենք պարզաբանել.

*Կցեք պաշտոնական փաստաթուղթ Առևտրային ռեգիստրից կամ այլ կորպորատիվ ռեգիստրից (օրինակ՝ առևտրային կազմակերպությունների ռեգիստրի արդիական քաղվածք), որը ցույց կտա սեփականության կառուցվածքը, ներառյալ վերջնական շահառու սեփականատերը (ֆիզիկական անձ) և տնօրենները։*

Բաժին Բ – ContourGlobal-ի աշխատողներին, տնօրեններին կամ նրանց Ազգականներին կատարված ֆինանսական վճարումներ

| | Այո | Ոչ |
|---|---|---|
| 2. Դուք, Ձեր տնօրենները, ծառայողները կամ փոխկապակցված իրավաբանական անձանցից որևէ մեկը աշխատավարձ, միջնորդավճար կամ այլ վճարներ վճարու՞մ եք ContourGlobal-ի աշխատողներին կամ տնօրեններին կամ նրանց ազգականներին։ | □ | □ |

Եթե այո, խնդրում ենք պարզաբանել.

**Բաժին Գ – ContourGlobal-ի՝ Ձեր ընկերությունում պաշտոն զբաղեցնող աշխատողներ**

| | Այո | Ոչ |
|---|---|---|
| 3. Վերջին 3 տարում ContourGlobal-ի աշխատողներից, տնօրեններից, ծառայողներից կամ նրանց ազգականներից որևէ մեկը եղե՞լ է Ձեր ընկերության կամ իր մասնաճյուղերի աշխատող, տնօրեն կամ ծառայող: | ☐ | ☐ |

Եթե այո, խնդրում ենք պարզաբանել.

**Բաժին Դ – Շահերի փաստացի կամ հնարավոր բախումներ**

| | Այո | Ոչ |
|---|---|---|
| 4. Կա՞ն շահեր կամ գործունեություն, որոնցում ներգրավված եք Դուք կամ Ձեր դուստր ձեռնարկությունները, որոնք կարող են, ըստ Ձեր բարեխիղճ դատողության, ներկայացնել կամ ըստ երևույթին ներկայացնում են շահերի բախում Ձեր պարտականությունների հետ, եթե աշխատանքի ընդունվեք ContourGlobal-ի կողմից: | ☐ | ☐ |

Եթե այո, խնդրում ենք պարզաբանել.

CONTOURGLOBAL

Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

| Բաժին Ե - Այլ | Այո | Ոչ |
|---|---|---|
| 5. Կայի՞ն այնպիսի հարցեր, որոնց Դուք չկարողացաք պատասխանել, որովհետև վստահ չէիք՝ արդյոք դրանք վերաբերում էին Ձեր կոնկրետ իրավիճակին: | □ | □ |

Եթե այո, խնդրում ենք պարզաբանել.

**Լրացուցիչ մեկնաբանություններ.**

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

______________________________

ԱՆՈՒՆ

______________________________

ՊԱՇՏՈՆ

ԱՄՍԱԹԻՎ՝

ՎԿԱՅԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

______________________________

ԱՆՈՒՆ

______________________________

ՊԱՇՏՈՆ

ԱՄՍԱԹԻՎ՝

Բաժին X

## <u>Պատժամիջոցներ</u>

Սույն գլխում շարադրված հասկացությունները պետք է մեկնաբանել հետևյալ նշանակությամբ.

*«ԱԱՎՎ»* նշանակում է ԱՄՆ Ֆինանսների նախարարության Արտասահմանյան ակտիվների վերահսկողության վարչություն:

*«Պատժամիջոցների ենթարկված երկիր»* նշանակում է ցանկացած երկիր կամ այլ տարածք, որը ցանկացած Պատժամիջոցների շրջանակներում ենթակա է ընդհանուր արտահանման, ներմուծման, ֆինանսական կամ ներդրումային բեռնարգելքի և, այստեղ նշված ամսաթվի դրությամբ, ներառում է Կուբան, Իրանը, Հյուսիսային Կորեան, Հյուսիսային Սուդանը և Սիրիան:

*«Պատժամիջոցներ»* նշանակում է տնտեսական պատժամիջոցների մասին օրենքներ, կանոնակարգեր, կանոններ կամ սահմանափակող միջոցառումներ, որոնք կիրառվում, օրենսդրական կարգով սահմանվում կամ ի կատար են ածվում ԱԱՎՎ-ի, Միացյալ Նահանգների Պետական դեպարտամենտի, Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի, Եվրոպական Միության կամ իր անդամ պետությունների կամ Նորին Մեծության գանձապետարանի և (կամ) որևէ այլ համապատասխան պետական մարմնի կողմից:

*«Պատժամիջոցների ցանկ»* նշանակում է ԱԱՎՎ-ի կողմից վարվող Հատուկ կատեգորիաների քաղաքացիների և արգելված անձանց ցուցակ կամ ցանկացած նմանատիպ ցուցակ, որը վարում կամ Պատժամիջոցների սահմանման մասին հրապարակային հայտարարություն են անում Միացյալ Նահանգների Պետական դեպարտամենտը, Եվրոպական Միությունը կամ իր անդամ պետությունները, Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը կամ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի պատժամիջոցների հարցերով որևէ կոմիտե կամ

Նորին Մեծության գանձապետարանը, և յուրաքանչյուր ցուցակ ժամանակ առ ժամանակ ուղղվում, լրացվում կամ փոխարինվում է:

Խնդրում ենք հաստատել, որ ո՛չ ընկերությունը, ո՛չ իր տնօրեններից, ծառայողներից, աշխատողներից կամ դուստր ձեռնարկություններից, գործակալներից կամ վերը նշվածներից որևէ մեկի անունից գործող այլ անձանցից որևէ մեկը՝

(i) նշված չէ Պատժամիջոցների որևէ ցանկում կամ չի պատկանում կամ վերահսկվում ցանկում նշված անձի կողմից կամ չի գործում ցանկում նշված անձի անունից.

(ii) Պատժամիջոցների ենթարկված երկրի կառավարություն չէ.

(iii) Պատժամիջոցների ենթարկված երկրի կառավարության գործակալություն կամ պետական հաստատություն կամ կառավարությանը ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրա կողմից վերահսկվող իրավունքի սուբյեկտ կազմակերպություն չէ.

(iv) տեղակայված չէ Պատժամիջոցների ենթարկված երկրում, գրանցված չէ այդպիսի երկրի օրենքներով կամ չի գործում այդպիսի երկրում գտնվող կամ կազմակերպված անձի անունից, կամ

(v) այլ կերպ չի հանդիսանում Պատժամիջոցների թիրախ:

Անուն՝

Պաշտոն՝

Ամսաթիվ՝

Բաժին XI

Գաղտնիության դրույթ և համաձայնություն

ContourGlobal-ը անձնական տվյալները հավաքում և մշակում է Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (ԵՄ) 2016/679 («ՏՊԸԿ») համաձայն։

Սույն ծանուցագիրը նկարագրում է, թե ինչպես ենք օգտագործում ContourGlobal-ի Երրորդ կողմի հարցաթերթիկի միջոցով հավաքված տեղեկությունները։

**Ձեր տեղեկությունների օգտագործումը մեր կողմից**

ContourGlobal-ն ընկերությունների և համապատասխան անհատների (բաժնետերեր, տնօրեններ, ծառայողներ, աշխատողներ) («Երրորդ կողմեր») մասին վերոհիշյալ տեղեկությունները, որոնք կարող են պարունակել անձնական տվյալներ, հավաքում է մեկ կամ մի քանի նպատակով մշակման համար՝

a) իրավական և նորմատիվային պարտավորություններին համապատասխանելու նպատակով, որոնք ContourGlobal-ի նկատմամբ կիրառելի են տարբեր երկրներում, որտեղ այն գործունեություն է իրականացնում, ինչպիսիք են ՄԹ «Կաշառակերության դեմ պայքարի մասին» օրենքը, ԱՄՆ «Արտերկրում կոռուպցիայի մասին» օրենքը, Իտալիայի կառավարության 231/2001 որոշումը և ՏՀԶԿ-ի «Օտարերկրյա պետական պաշտոնյաներին կաշառք տալու դեմ պայքարի մասին» կոնվենցիան.

b) ContourGlobal-ի և Երրորդ կողմի միջև ապագայում կնքվելիք պայմանագրերի կատարման նպատակով.

c) Երրորդ կողմերի նկատմամբ կոռուպցիայի դեմ պայքարի, փողերի լվացման դեմ պայքարի, տնտեսական պատժամիջոցների կիրառման բազմակողմանի իրավաբանական փորձաքննություն անցկացնելու նպատակով՝ նախքան նրանց հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելը, որպեսզի պաշտպանվեն ContourGlobal-ի շահերն ու հեղինակությունը.

d) Երրորդ կողմի ներքին կանոններին և քաղաքականությանը համապատասխանելու նպատակով.

e) կիրառելի օրենսդրության համաձայն՝ Երրորդ կողմին նույնականացնելու և (կամ) նրա ինքնությունը հաստատելու նպատակով։

Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

**Ինչպես ենք փոխանցում Ձեր տեղեկությունները**

Մենք կարող ենք որոշ տեղեկություններ փոխանցում ContourGlobal-ի ներսում, երրորդ կողմ հանդիսացող մեր գործընկերներին, գործարար շրջանակներին ու ենթակապալառուներին և այլ երրորդ անձանց՝ ստորև շարադրված նպատակներով։

- **ContourGlobal-ի ներսում** Մենք կարող ենք Ձեր անձնական տեղեկությունները բացահայտել երրորդ կողմերին, այդ թվում՝ մեր դուստր ձեռնարկություններին և ContourGlobal-ի այլ տնտեսվարող սուբյեկտների։ Բոլոր այդպիսի երրորդ կողմերից պահանջվում է պահպանել տեղեկատվության գաղտնիությունն այնքանով, որքանով ստանում են այդպիսի տեղեկատվություն։
- **Երրորդ կողմ հանդիսացող ծառայության մատակարարներին** ContourGlobal-ը կարող է Ձեր անձնական տեղեկությունները բացահայտել հետախուզական կամ հետաքննական գործակալություններին՝ կապված համալիր իրավական ստուգումների անցկացման հետ՝ միայն առանձնահատուկ հանգամանքներում, օրինակ՝ երբ կարևոր է գործարքի արժեքը, կամ երբ «կարմիր դրոշներ» են հայտնաբերվել նախնական ստուգման արդյունքում։ Բոլոր այդպիսի երրորդ կողմերից պահանջվում է պահպանել տեղեկատվության գաղտնիությունն այնքանով, որքանով ստանում են այդպիսի տեղեկատվություն։
- **Իրավական պատճառներ** Մենք Ձեր անձնական տեղեկությունները կամ դրանց մի մասը կարող ենք բացահայտել նաև հետևյալ դեպքերում՝ (ա) ինչպես նախատեսված է կիրառելի օրենսդրությամբ, կանոնակարգով, դատավարությամբ կամ այլ օրենսդրական պահանջով, կամ՝ ի համապատասխանություն դրանց, (բ) ի պատասխան կարգավորող, վերահսկիչ, կառավարական կամ իրավապահ մարմինների հարցումների, և (գ) երբ մենք կարծում ենք, որ բացահայտումն անհրաժեշտ կամ պատշաճ է ֆիզիկական վնասներ կամ ֆինանսական կորուստ կանխելու համար կամ կասկածելի կամ փաստացի անօրինական գործունեության հետաքննության հետ կապված։

Վերը նշված յուրաքանչյուր դեպքում ContourGlobal-ը կգործադրի ողջամիտ ջանքեր՝ երաշխավորելու, որ բոլոր փոխանցված տեղեկությունները ստացողները ձեռնարկեն անվտանգության և գաղտնիության ապահովման միջոցառումներ, որպեսզի պաշտպանեն այդ տեղեկությունները։

**Ինչպես ենք փոխանցում Ձեր տեղեկությունները**

Համաշխարհային շուկայում մեր գործունեությունը նշանակում է, որ կարող ենք Ձեր տեղեկությունները փոխանցել Եվրոպական տնտեսական տարածքի սահմաններից դուրս։ Այդ դեպքում մենք կապահովենք, որ պաշտպանության պատշաճ մակարդակ տրամադրվի Ձեր տեղեկությունները պաշտպանելու համար։

Մեր բիզնեսի համաշխարհային բնույթով պայմանավորված՝ Ձեր տեղեկությունները կարող են փոխանցվել դեպի Եվրոպական տնտեսական տարածքից (ԵՏՏ) դուրս գտնվող իրավական

համակարգեր կամ այդպիսի իրավական համակարգերից: Հնարավոր է՝ այդպիսի իրավական համակարգերը չտրամադրեն տվյալների միևնույն մակարդակի պաշտպանություն, ինչպիսին ապահովում է ձեր երկրի իրավական համակարգը, և հնարավոր է, որ Եվրոպական հանձնաժողովը կամ ձեր երկրի իրավական համակարգը չհամարի, որ դրանք տրամադրում են տվյալների բավարար մակարդակի պաշտպանություն: Այն դեպքերում, երբ Ձեր տեղեկությունները փոխանցվում են ԵՏՏ-ի սահմաններից դուրս, ձեռնարկվում են բոլոր միջոցները, որպեսզի ապահովվի փոխանցման իրականացումը պատշաճ անվտանգության միջոցառումների կիրառմամբ (որոնք կարող են իրենց բնույթով լինել պայմանագրային)՝ համաձայն տվյալների պաշտպանության մասին օրենքների:

**Տեղեկությունների պահպանում**

Մենք Ձեր անձնական տեղեկությունները մեր համակարգերում կպահենք հետևյալ ժամանակաշրջաններից ամենաերկարի ընթացքում՝

- որքան անհրաժեշտ է համապատասխան գործունեության համար, կամ որքան սահմանված է որևէ համապատասխան համաձայնագրում, որը կնքում եք մեզ հետ.
- ժամանակի այն տևողությունը, որը ողջամիտ է փաստաթղթերը պահելու համար, որպեսզի ապացուցվի դրանց համապատասխանությունը մասնագիտական կամ իրավական պարտավորություններին.
- օրենքով նախատեսված ցանկացած պահպանման ժամանակաշրջան.
- այն ժամանակաշրջանի ավարտը, որում կարող է դատավարության կամ հետաքննությունների անհրաժեշտություն ծագել՝ մեր կայքի կամ Ձեզ տրամադրվող մեր ծառայությունների օգտագործման կապակցությամբ, կամ
- մեր Փաստաթղթերի պահպանման քաղաքականության համաձայն:

**Ձեր իրավունքները**

Տվյալների պաշտպանության մասին օրենքները կարող են Ձեզ տալ իրավունքներ, այդ թվում՝ տվյալներից օգտվելու իրավունքներ, ինչպես նաև այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են տվյալների ջնջման, ուղղման, սահմանափակ նպատակներով օգտագործման, ամենևին չօգտագործման կամ Ձեզ կամ երրորդ կողմին փոխանցման իրավունքները:

Դուք կարող եք ունենալ տվյալների պաշտպանության մասին օրենքներով նախատեսված հետևյալ իրավունքները՝

- **Սուբյեկտի՝ դեպի իր անձնական տվյալները մուտք գործելու պահանջ ներկայացնելու իրավունք.** Ձեր մասին ContourGlobal-ի կողմից պահվող անձնական տվյալների մանրամասները և այդ անձնական տվյալների պատճենը ստանալու համար գրավոր պահանջ ներկայացնելու իրավունքը:

- **Սխալների ուղղման իրավունք.** Ձեր մասին ոչ ճիշտ տեղեկությունների ուղղման իրավունքը։
- **Ջնջման իրավունք («մոռացության մատնելու իրավունք).** Ձեր մասին որոշակի անձնական տվյալների ջնջման իրավունքը։
- **Մշակումը սահմանափակելու իրավունք.** Ձեր անձնական տվյալների միայն սահմանափակ նպատակներով օգտագործումը պահանջելու իրավունքը։
- **Առարկելու իրավունք.** Ձեր անձնական տվյալների օգտագործմանն առարկելու իրավունքը, ներառյալ մարքեթինգի նպատակով օգտագործմանն առարկելու իրավունքը։
- **Տվյալների փոխադրելիության իրավունք.** Մեզ տրամադրած անձնական տվյալները տեխնիկապես ընթեռնելի ձևաչափերով Ձեզ կամ որևէ երրորդ անձի փոխանցելու պահանջ ներկայացնելու իրավունքը։
- **Համաձայնությունը հետ վերցնելու իրավունք.** Ձեր անձնական տվյալները մշակելու վերաբերյալ նախկինում մեզ տրված որևէ համաձայնություն հետ վերցնելու իրավունքը։ Եթե հետ վերցնեք Ձեր համաձայնությունը, դա չի ազդի մինչ համաձայնության հետ վերցնելը Contour-ի կողմից Ձեր անձնական տվյալների օգտագործման օրինականության վրա։

Այս իրավունքները բացարձակ չեն. դրանք ոչ միշտ են կիրառելի, և կարող են լինել բացառություններ։ Մենք կարող ենք, Ձեր պահանջին ի պատասխան, խնդրել հաստատել Ձեր ինքնությունը և տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնք կօգնեն ավելի լավ հասկանալ Ձեր պահանջը։ Եթե չբավարարենք Ձեր պահանջը, մենք կբացատրենք պատճառը։

## Դիմեք մեզ

Վերը նշված իրավունքներից ցանկացածի կիրարկման համար, կամ եթե այլ հարցեր ունեք մեր կողմից Ձեր տեղեկությունների օգտագործման վերաբերյալ կամ այս գաղտնիության ծանուցագրի մասին, խնդրում ենք էլեկտրոնային նամակ ուղարկել հետևյալ հասցեով՝ privacy@contourglobal.com, կամ դիմել գործաղիր փոխտնօրեն, Համապատասխանության բաժնի ավագ աշխատակից Էլեն Մեյսին՝ ContourGlobal, 116 Park Street, Park House, 7th Floor, Office 7.08, London W1K 6SS, United Kingdom։

Եթե դժգոհ եք այն բանից, թե ինչպես ենք մշակել ու պահել Ձեր տվյալները, ապա իրավունք ունեք բողոքելու տվյալների պաշտպանության հարցերը կարգավորող տեղական մարմնին։

Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

☐ ԵՍ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ

Ես կարդացել և հասկացել եմ վերը շարադրվածը և հաստատում եմ, որ տրամադրված տեղեկությունները ճշմարիտ ու ստույգ են, և անվերապահորեն համաձայն եմ անձնական տեղեկությունների մշակմանը և՛ իմ, և՛ այլ կողմերի մասին, որոնցից համաձայնություն եմ ստացել նախքան տեղեկությունները ներկայացնելը։

ՍՏՈՐԱԳՐՈՂ՝

ԱՆՈՒՆ՝

ՊԱՇՏՈՆ՝

ԱՄՍԱԹԻՎ՝

Տարբերակ՝ 2019 թ. հոկտեմբեր

## ՀԱՎԱՍՏՈՒՄ.

Ստորև ստորագրելով՝ ես հավաստում եմ, որ կատարել եմ անհրաժեշտ ընթացակարգեր և հարցումներ, որպեսզի ապահովեմ ContourGlobal-ի սույն Երրորդ կողմի հարցաթերթիկում տրված պատասխանների ամբողջականությունն ու ճշգրտությունը այնքանով, որքանով տեղյակ եմ: Ես նաև համաձայն եմ ContourGlobal-ին շուտափույթ, գրավոր (compliance@contourglobal.com) ծանուցել, եթե ContourGlobal-ի սույն Երրորդ կողմի հարցաթերթիկում տրամադրված տեղեկություններից որևէ մեկը փոխվի:

Ստորագրող՝

Անուն՝

Պաշտոն՝

Ամսաթիվ՝